ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

« 16 » հունվարի 2025թ. N 13 -Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 05-ի թիվ 151-Լ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության 11.1 կետի 5-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ու «ԻՄՓՐՈՒՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 17 հոկտեմբերի 2024 թվականին կնքված պետության կարիքների համար «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Լ-24/2-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի 8.11 կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 2024 թվականի կարիքների համար «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Լ-24/2» ծածկագրով (լուսարձակների ձեռքբերում) ընթացակարգի հաղթող ճանաչված «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ին պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Հաստատել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող տեղեկությունները՝ համաձայն կից հավելվածի:
3. Սույն հրամանը սահմանված ժամկետում ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն և մասնակցին:

Недействительная подпись

X

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Подписано: MARGARYAN KAREN 2410820077

Հավելված 1

ՀՀ ՔԿ գլխավոր քարտուղարի

«16» հունվարի 2025թ.

թիվ 13-Լ հրամանի

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ՄՓՐՈՒՎ» ՍՊԸ	04436817	ք. Վաղարշապատ 1101,Մռավյան փող. 40Ա	-	Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել գնման առարկա հանդիսացող թվով 10 հատ լուսարձակներ, որի հիման վրա միակողմանի լուծվել է ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Լ-24/2-1 ծածկագրով պայմանագիրը	-	16.01.2025թ. ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Լ-24/2